
ԿՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՆՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԳԵՐՈՒՄ

ԱՐՄԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հանրահայտ է, որ, ըստ լեզուների ծևաբանական դասակարգման, թուրքերենը դասվում է կցական լեզուների տիպին, որոնց համար բնութագրական են բառակազմական մասմիկավորումը, քերականական ձևույթների մեջինաստությունը, հոլովական և խոնարհման միասնական տիպը (միօրինակությունը), քերականական նշանակությունը ունեցող հնչյունական հերթագայությունների բացակայությունը և մի շարք այլ առանձնահատկություններ: Ժամանակակից հայերենը նույնպես բնութագրվում է որպես առավելապես կցական տիպի լեզու, թեև այստեղ առկա են նաև վերլուծականության և թերականության տարրեր:

Ներկայացվող հողվածը նվիրված է նշված երկու լեզուների հոլովական համակարգերի գուգադրական քննությանը, ի մասնավորի՝ կցականության առանձնահատուկ դրսերումներին:

Ունենալով հոլովական շատ մեծ ընդհանրություններ՝ հայերենը և թուրքերենը միաժամանակ երևան են հանում որոշակի տարբերություններ, որոնք պայմանավորվում են նրանց՝ իբրև առանձին լեզուների ներքին օրենքներով, բնույթով ու առանձնահատկություններով: Հայերենագիտական թերևս ոչ մի հարց երբեւ այնքան մանրակրկիտ քննության չի ենթարկվել, ինչպես հոլովների խնդիրը: Հայոց լեզվի հոլովմերը քննել-լուսաբանել են բազմաթիվ հայ և օտար լեզվաբաններ ու թերականներ:

Ելնելով արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերության տարբեր մեկնաբանումներից, այլև հոլովների քանակի հարցում առաջնորդվելով ձևական, իմաստային և գործառական կամ շարահյուսական չափանիշներով՝ հայ լեզվաբաններն առանձնացնում են տարբեր քանակի հոլովմեր (5, 6, 7):

Ուսումնասիրելով հայերենի և թուրքերենի հոլովմերը, համեմատելով դրանք այլ լեզուներում առկա հոլովական համակարգերի հետ՝ եկել ենք այն համոզման, որ ժամանակակից հայերենի, առավել ևս ժամանակակից թուրքերենի հոլովմերը պետք է որոշել ոչ թե փոփոխված բարի սոսկ արտաքին ձևով՝ հոլովակերտ մասնիկով կամ վերջավորությամբ, այլ նրանց թե՝ ձևով և թե՝ արտահայտած նշանակությամբ կամ հարաբերությամբ՝ միասին վերցրած:

Սույն հողվածում ավելի նպատակահարմար համարեցինք համեմատել հայերենի և թուրքերենի հոլովական համակարգերը՝ առաջնորդվելով հայերենի 7 հոլովների տեսությամբ:

Թուրքերենում հոլովների քանակը 6-ն է, ընդ որում՝ հոլովները կարող են անվանվել ըստ իմասկան գործառութիւն կամ վերջավորության, ինչպես՝ Yalın durum (Yalın hal) – ուղղական հոլով, Tamlayan durumu – սեռական հոլով, Yönelme/Yaklaşma durumu (-e hali) – տրական հոլով, Belirtme/Yükleme durumu (-i hali) – հայցական հոլով, Çıkma/Ayrılma durumu (-den hali) – բացառական հոլով և Kalma/Bulunma durumu (-de hali) – ներգոյական հոլով։ Նրանցից յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ ձևը։ Հոլովական մասնիկները շեշտակիր են։

Ժամանակակից հայերենի և թուրքերենի հոլովներից յուրաքանչյուրն ունի իր հատուկ ձևը կամ ձևերը, որոնց բնորոշ հարացույցը հետևյալն է։

Հայերեն		Թուրքերեն	
Ուղղ.	տեսր + Ø	Yalın durum – Ø	defter + Ø
Սեռ.	տեսր + <i>h</i>	Tamlayan durumu (-in hali)	defter + <i>in</i>
Տր.	տեսր + <i>h(a)</i>	Yönelme durumu (-e hali)	defter + <i>e</i>
Հայց.	տեսր + Ø(<i>p</i>)	Belirtme durumu (-i hali)	defter + <i>i</i>
Բաց.	տեսր + <i>hg</i>	Çıkma durumu (-den hali)	defter + <i>den</i>
Գործ.	տեսր + <i>ny</i>	-	-
Ներգոյ.	տեսր + <i>nið</i>	Kalma durumu (-de hali)	defter + <i>de</i>

Վերոբերյալ այսուսակից դժվար չէ նկատել, որ հայերենի և թուրքերենի հոլովական համակարգում առկա են բազմաթիվ նմանություններ։ Թուրքերենում գործիական հոլով որպես այդպիսին գոյություն չունի. այս հոլովի հարաբերություններն արտահայտվում են կապական կառույցների միջոցով։ Թուրքերենում, համաձայն ծայնավորների ներդաշնակության օրենքի (Էռլյունն այն է, որ հավելվող ծայնավորների բնույթը սովորաբար պայմանավորվում է արմատի ծայնավորի տեսակով), բարի վերջին վաճկի ծայնավորից կախված, հոլովական մասնիկի ծայնավորը կարող է ունենալ հնչյունական չորս տարբերակ, որոնք ներկայացվում են ստորև բերվող հոլովնան այսուսակներում։

Ա. Գոյական անուններ, որոնք վերջանում են բաղաձայն հնչյունով

Անվան վերջին վաճկի ծայնավ.	Ուղղ.	Սեռ.	Տր.	Հայց.	Բաց.	Ներգ.
a/i	duvar	duvar+ <i>in</i>	duvar+ <i>a</i>	duvar+ <i>i</i>	duvar+ <i>dan</i>	duvar+ <i>da</i>
	yıldız	yıldız+ <i>in</i>	yıldız+ <i>a</i>	yıldız+ <i>i</i>	yıldız+ <i>dan</i>	yıldız+ <i>da</i>
e/i	el	el+ <i>in</i>	el+ <i>e</i>	el+ <i>i</i>	el+ <i>den</i>	el+ <i>de</i>
	deniz	deniz+ <i>in</i>	deniz+ <i>e</i>	deniz+ <i>i</i>	deniz+ <i>den</i>	deniz+ <i>de</i>
o/u	peron	peron+ <i>un</i>	peron+ <i>a</i>	peron+ <i>u</i>	peron+ <i>dan</i>	peron+ <i>da</i>
	kum	kum+ <i>un</i>	kum+ <i>a</i>	kum+ <i>u</i>	kum+ <i>dan</i>	kum+ <i>da</i>
ö/ü	göl	göl+ <i>ün</i>	göl+ <i>e</i>	göl+ <i>ü</i>	göl+ <i>den</i>	göl+ <i>de</i>
	kostüm	kostüm+ <i>ün</i>	kostüm+ <i>e</i>	kostüm+ <i>ü</i>	kostüm+ <i>den</i>	kostüm+ <i>de</i>

Բ. Գոյական անուններ, որոնք վերջանում են ձայնավոր հնչյունով

	Ուղի.	Սեռ.	Տայգ.	Բաց.	Ներզ.
a/i	tarla	tarla+nın	tarla+ya	tarla+yi	tarla+dan
	yapı	yapı+nın	yapı+ya	yapı+yi	yapı+da
e/i	gazete	gazete+nin	gazete+ye	gazete+yi	gazete+den
	gemi	gemi+nin	gemi+ye	gemi+yi	gemi+de
o/u	palto	palto+nun	palto+ya	palto+yu	palto+dan
	kutu	kutu+nun	kutu+ya	kutu+yu	kutu+dan
ö/ü	banliyö	banliyö+nün	banliyö+ye	banliyö+yü	banliyö+den
	akü	akü+nün	akü+ye	akü+yü	akü+den

Դայերենի հոլովական ձևերը կազմվում են երեք կերպ.

ա) բառի վրա հոլովական վերջավորությունների ավելացմամբ, օրինակ՝ **սար – սար+ից, կեսօր – կեսօր+վա,**

բ) բառի վերջնահնչյուն ձայնավորի փոփոխությամբ, օրինակ՝ **ուկի-ուկու (ի/ու):**

Այս երկու տիպերը միասին կոչվում են արտաքին թեքում:

գ) արմատաձայնավորի կամ երկինչյունի փոփոխությամբ, օրինակ՝ **տուն-տան (ու/ա), մայր-մոր (այ/ո):** Այս տիպը կոչվում է ներքին թեքում:

Թուրքերենի հոլովածերը կազմվում են բացառապես հավելման ճանապարհով՝ բառի վրա հոլովական վերջավորությունների ավելացմամբ (*kitap+ta, kitap+tan*), ասել է թե՝ այս լեզվին համապատասխանում է միայն արտաքին թեքումը:

Ուղղական հոլով – Yalın Durum

Լինելով բառի ուղիղ, անփոփոխ ձևը՝ այս հոլովը կոչվում է նաև ուղիղ հոլով, ի տարբերություն մյուս հոլովների, որոնք կազմվում են զանազան փոփոխություններով և կրում են թեք հոլովներ անվանումը¹: Թե՛ հայերենում և թե՛ թուրքերենում եզակի ուղղականը ձևաբանական հատուկ ցուցիչ չունի և մյուս թեք հոլովներին ու հոգնակի ուղղականին հակադրվում է զրո ձևույթով: Գ. Զահուլյանը առաջարկում է անվան այդ ձևը կոչել մաքուր անվանական հիմք՝ ի տարբերություն մյուս հոլովների, որոնք հաճախ ի հայտ են բերում հնչյունափոխված հիմքեր: Ուղղական հոլովը և հայերենում, և թուրքերենում կարելի է դիտել որպես յուրատեսակ մեկնակետ, որից հիմքի ձևափոխումներով ու վերջավորությունների հավելումով կազմվում են եզակի թեք և հոգնակի բոլոր հոլովները*:

Եթե հայերենում որոշ թեք հոլովներ կազմվում են ոչ միայն ուղղականի, այլև սեռական-տրականի ձևից, ապա թուրքերենում թեք հոլովները կազմվում են միայն ուղղական հոլովի հիմքից՝ համապատասխան մասնիկի ավելացումով:

¹ Տես Tahsin Banguoğlu, Türkçenin grameri, Ankara, 2004, էջ 324:

* Պատահական չէ, որ թուրքերենում այն ունի **Yalın Durum**, այսինքն՝ «մաքուր, զուտ, անխառն» հոլով անվանումը:

Հայերենի հոլովների կազմությունը

Ուղղ.	Սեռ.-տր.	Բաց.	Գործ.	Ներգ.	
տուն+ ∅	ուղղ. ձկից անտառի(ն)	ուղղ. ձ. տեսրից	սեռ.-տր. ձկից հայր-հոր-հորից օռ-օրվա-օրվա- նից	ուղղ. ձ. սեռ.-տր. ձկից մատիտով քույր-քրոջ- քրոջով	ուղղ. ձ. գրքում

Թուրքերենի հոլովների կազմությունը

Ուղղ.	Սեռ.	Տր.	Հայց.	Բաց.	Ներգ.
ու դ դ ա կ ա ն ի ձ և ի ց					
okul+∅ դպ- րոց+օ	okulun դպրո- ցի	okula դպրո- ցի(ն)	okulu դպրո- ցը	okuldan դպրո- ցից	okulda դպրո- ցում

Սեռական հոլով – Tamlayan durumu (-in hali)

Հայերենում սեռական հոլովը հանդես է գալիս որպես գոյականի կամ գոյականաբար գործածված բառի լրացում: Սեռական հոլովը ցույց է տալիս վերաբերություն՝ բառի ամենալայն իմաստով: Սեռական հոլովի ամենասովորական և հիմնական իմաստն է հատկացումը (ստացականությունը), որը ցույց է տալիս, թե առարկան ում կամ ինչին է պատկանում: Թուրքերենում սեռական հոլովով ձևավորվում է իզաֆեթային կառույցը*, որտեղ հատկացուցիչը ստանում է սեռական հոլովի վերջավորություն. բաղաձայն հնչյունով վերջացող բառերից հետո դրվում են **-in, -in, -un, -ün,** ձայնավոր հնչյունով վերջացող բառերից հետո՝ **-nim, -num -nin -ünim** շեշտակիր վերջավորությունները, իսկ հատկացյալը ստանում է համապատասխան դեմքի ու թվի պատկանելության մասնիկ².

yıldız – աստղ	yıldızın – աստղի
gemi – նավ	geminin – նավի
dünya – աշխարհ	dünyanın – աշխարհի
depo – պահեստ	deponun – պահեստի

Ըստ սեռական հոլովի ձևավորման՝ ժամանակակից հայերենում տարբերում են **-ի, -ու, -ա, -ան, -ոք, -վա, -ո, -ց** հոլովումներ:

Տրական հոլով - Yönelme/Yaklaşma durumu (-e hali)

Թուրքերենում տրական հոլովը կազմվում է **-a, -e** բերույթների միջոցով, եթե գոյականը վերջանում է բաղաձայնով, իսկ եթե ձայնավորով, ապա բառահիմքի և հոլովական մասնիկի միջև դրվում է **-y-** ձայնորդը:

* Թուրքերենում սեռական հոլովով իզաֆեթային կառույցը համապատասխանում է հայերենի հատկացուցիչ-հատկացյալին:

² Стю Иванов С. Н. Курс турецкой грамматики. Часть 1. Грамматические категории имени существительного. Л., 1975, № 28:

Çocuk kapıya yaklaşıyor. «Երեխան մոտենում է դռանը»:

Ben size bakıyorum. «Ես ձեզ եմ նայում»:

Հայերենում տրական հոլովք հանդես է գալիս որպես բայի, բայանվան կամ ածականի խնդիր: Ուսումնասիրվող երկու լեզվում ել, ի տարրերություն սեռական հոլովի, որը հանդես է գալիս որպես առարկայական հանգում (վերաբերություն, ստացականություն), տրական հոլովք հանդես է գալիս որպես գործողության հանգում (ուղղվածություն դեպի առարկան):

Հայցական իոլով – Belirtme/ Yükleme durumu (-i hali)

Ի տարբերություն թուրքերենի, հայերենում հայցական հոլովը կազմության առանձին ծև չունի. իրի առնան դեպքում գոյականների հայցականը նման է ուղղականին՝ ուղղականաձև է, անձի առնան դեպքում՝ տրականին՝ տրականաձև է: Թուրքերենում պատկերն այլ է. այստեղ թե՛ տրական և թե՛ հայցական հոլովներն ունեն իրենց հատուկ հոլովակազմիչները: Ինչպես նշում է Բ. Ա. Սերեբրեննիկովը, թուրքերենում յուրաքանչյուր հոլով ունի իր կայուն հոլովական վերջավորությունը³: Հայցական հոլովը կազմվում է -i, -i-, -u, -ü մասնիկների միջոցով.

карию – դուռը, pencereyi – պատուհանը,

buzu – սառույցը, Gönül’ü - Գյոնուլին

Նախադասության մեջ հայցական հոլովով դրված գոյականը կատարում է ուղիղ խնդրի շարահյուսական դեր: Եթե առկա է որոշյալ առում, ուղիղ խնդիրը ստանում է հայցական հոլովի վերջանանիկ:

Ben bu mektubu yazmadım. «Ես այս նամակով չեմ գործել»:

Այս առումով համամիտ ենք ռուս արևելագետ Բ. Ա. Սերեբրեննիկովի հետ, ըստ որի՝ կցական լեզուների բացարձակ մեծամասնությունում, այդ թվում՝ թուրքերնում, հայցական հոլովի վերջավորությունն ունի հոդի նշանակություն և սովորաբար ցույց է տալիս գործողության այն օբյեկտը, որն արդեն հայտնի է խոսակցին, ասել է թէ՝ հանդես է գալիս որոշյալության ցուցիչի դեռոպ⁴:

Անորոշ առման դեպքում ուղիղ խնդիրը հայցական հոլովի վերջավորություն չի ստանում.

Bir roman okuyorum. «Մի (ինչոր մի՝ անհայտ) սիրավեա եմ կարդում»:

Բազարական իուրպ – Çıkma/Ayrılma durumu (-den hali)

Բացառական հոլովք երկու լեզուներում էլ արտահայտում է հիմնականում ելակետի կամ սկզբնակետի, հեռացման կամ անջատման իմաստ, որը շարահյուսական տարբեր կապակցությունների մեջ տարբեր մասնակի դրսնորումներ ու իմաստային երանգներ է ստանում:

³ Стю Серебренников Б. А. Причины устойчивости агглютинативного строя и вопрос о морфологическом типе языка // "Морфологическая типология и проблема классификации языков". М.-Л., 1965, № 9:

⁴ Տես նույն տեղոր, էջ 15:

Հայերենում բացառական հոլովը կազմվում է ուղղականից կամ տրականից՝ **-ից** և **-ուց** վերջավորություններով. **-ուց** են ստանում **ու** հոլովման բառերը՝ կաղնի-կաղնու-կաղնուց, կարդալ-կարդալու-կարդալուց, սեր՝ սիրուց, աստված՝ աստծուց, իսկ **-ից** են ստանում մյուս հոլովումներին պատկանող բառերը՝ պատ-պատի-պատից, իշխանություն-իշխանության-իշխանությունից և այլն: Կան որոշ բառեր, որոնց բացառականը կազմվում է սեռական-տրականից. այս դեպքում բացառականի **-ից** վերջավորությունից առաջ հավելվում է **-ն** ենթաձևույթը, ինչպես *օր-օրվա+ն+ից, ցերեկվա+ն+ից*: Այս **ն-ն** էդ. Աղայանը կոչում է ներույթ. ըստ այդմ՝ բացառականին հատկացնում է 2 կարգի կաղապար՝ ներույթավոր՝ *աղջկա+ն+ից* և ամներույթ՝ *ամս+թ+ից*⁵:

Թուրքերենում բացառական հոլովը կազմվում է **-dan, -den** (Եթե գոյականը վերջանում է ձայնավորով կամ ձայնեղ բաղաձայնով) և **-tan, -ten** վերջածանցների միջոցով (Եթե գոյականը վերջանում է խուլ բաղաձայնով), օրինակ՝

okuldan – դպրոցից, evden – տնից, renkteen – գույնից

Գործիական հոլով

Հայերենում այս հոլովը կազմվում է ուղղականի կամ սեռական-տրականի ձևից: Հոլովական վերջավորություններն են **-ով** և **-ով**. տետր+տետրով (ուղղականի ձևից), *լավություն-լավությամբ//լավությունով*, *արյուն-արյամբ//արյունով* (սեռական-տրականի ձևից):

Ի տարբերություն հայերենի, թուրքերենում գործիական հոլով որպես այդպիսին չկա. այս հոլովի իմաստներն արտահայտվում են “**ile**” հետադրության միջոցով, որը գտնվում է վերջածանցի վերաճելու փուլում՝ ունենալով ինչպես առանձին, այնպես էլ միասին գրություն⁶: Միասին գրության դեպքում հետադրությունը ենթարկվում է ձայնավորների ներդաշնակության օրենքին, իսկ երբ իմքը վերջանում է բաղաձայնով, **-ile** հետադրությունը կորցնում է առաջին ձայնավոր հնչյունը: Եթե գոյական անունը վերջանում է ձայնավորով կամ ստանում է երրորդ դեմքի պատկանելության վերջածանց, ապա **-ile** հետադրության **-i** հնչյունը փոխվում է **-y-ի:** Խնդիրը, որն արտահայտվում է անվան և **-ile** հետադրության միջոցով, նշանակում է.

ա) համատեղ գործող անձ.

Karine Arman ile (Armanla) okula gitmek. «Կարինեն Արմանի **հետ** (միասին) դպրոց է գնում»:

բ) գործողության կատարման գործիք՝ ամենալայն իմաստով.

Çizgiyi kurşunkalem ile (kurşunkalemle) çiziyorum. «Գիծը նատիտով եմ գծում»:

Ներգոյական հոլով – Kalma/Bulunma durumu (-de hali)

⁵ Տե՛ս Էդ. Աղայան, ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 244:

⁶ Տե՛ս Ա. Սաֆարյան, Թուրքերենի դասագիրք, Եր., 2001, էջ 44:

Ներգոյական հոլովն արտահայտում է պարունակման իմաստ: Հայերենում ներգոյական հոլովաձևը կազմվում է **-ում** թեքութքով: Այն հիմնականում ավելանում է **-ի, -ու** և (որոշ բացառությամբ) **-վա** հոլովումներին պատկանող գոյականների ուղիղ ձևին: Թուրքերենում ներգոյական հոլովը կազմվում է **-da, -de** և **-te** (խոլերից հետո) վերջավորությունների օգնությամբ.

mağaza – mağazada (խանութ - խանութում), dolap – dolapta (պահարան – պահարանում)

Թուրքերենին բնորոշ բաղաձայնների առաջընթաց առնձանման երևույթի համաձայն՝ բացառականի և ներգոյականի հոլովական մասնիկները ենթարկվում են դիրքային տարրերակման⁷. Եթե գոյականը վերջանում է խուլ բաղաձայնով, ապա այն, ազդելով կցվելիք բացառական հոլովի **-dan, -den** և ներգոյական հոլովի **-da, -de** հոլովակերտի սկզբի **-d** ձայներ հնչյունի որակի վրա, նմանեցնում է իրեն՝ փոխելով **-t** խուլ բաղաձայնի, այլ կերպ ասած՝ խուլ բաղաձայնով վերջացող հիմքերից հետո ձայնեղ մասնիկները խլանում են, այսպես՝

բացառ. hnl.՝ renk – գույն, renk + **den** = renkten (գույնից)

ներգոյ hnl.՝ kitap – գիրք, kitap + **da** = kitapta (գրքում)

Արաբերենից կատարված մի շարք փոխառություններում, եթե բառը վերջանում է **-l, -p, -t** խուլ բաղաձայններով, ապա բառավերջում կցվող հոլովակերտների **-a, -ı, -u** ձայնավորները քմայնանալով կարող են հնչյունափոխվել **-e, -i, -ü** ձայնավորների: Այդ բառերի հոլովման բնորոշ հարացույցը հետևյալն է:

Եզակի				
<i>Ուղղ.</i>	mahsul	harp	saat	
<i>Սեռ.</i>	mahsul+ün	harb+in	saat+in	
<i>Տր.</i>	mahsul+e	harb+e	saat+e	
<i>Հայց.</i>	mahsul+ü	harb+i	saat+i	
<i>Բաց.</i>	mahsul+den	harp+ten	saat+ten	
<i>Ներգ.</i>	mahsul+de	harp+te	saat+te	
Հոգնակի				
<i>Ուղղ.</i>	mahsul+ler	harp+ler	saat+ler	
<i>Սեռ.</i>	mahsul+ler+in	harp+ler+in	saat+in	
<i>Տր.</i>	mahsul+ler+e	harp+ler+e	saat+e	
<i>Հայց.</i>	mahsul+ler+i	harp+ler+i	saat+i	
<i>Բաց.</i>	mahsul+ler+den	harp+ler+den	saat+ten	
<i>Ներգ.</i>	mahsul+ler+de	harp+ler+de	saat+te	

⁷ Տե՛ս Mehmet Hengirmen, Türkçe temel dilbilgisi, Ankara, 2006, էջ 128:

Արաբերենից կատարված փոխառությունները, որոնք վերջանում են «այն»-ով և «համզե»-ով, հոլովկում են բաղաձայնով վերջացող հիմքերի պես*.

<i>Ուղղ.</i>	içtimā+Ø	menşe+Ø
<i>Սեռ.</i>	içtimā+in	menşe+in
<i>Տր.</i>	içtimā+a	menşe+e
<i>Դայց.</i>	içtimā+i	menşe+i
<i>Բաց.</i>	içtimā+dan	menşe+den
<i>Ներգ.</i>	içtimā+da	menşe+de

Հոլովական վերջավորությունները, կցվելով ստացականության վերջավորություն ստացած գոյականներին, կարող են առաջացնել թերականական համանունություն: Բաղաձայնով վերջացող գոյական անունները, ստանալով երկրորդ և երրորդ դեմքի ստացական մասնիկ, բոլոր թեր հոլովներում ունենում են հնչյունների միևնույն համակցությունը⁸.

<i>Ուղղ.</i>	<i>elin – բո՞ն ձեռքը</i>	<i>eli – նրա ձեռքը</i>
<i>Սեռ.</i>	elinin – (elin + in)	elinin – (eli + n [*] + in)
<i>Տր.</i>	eline – (elin + e)	eline – (eli + n + e)
<i>Դայց.</i>	elini – (elin + i)	elini – (eli + n + i)
<i>Բաց.</i>	elinden – (elin + den)	elinden – (eli + n + den)
<i>Ներգ.</i>	elinde – (elin + de)	elinde – (eli + n + de)

- 1) ev-in-in - «բո՞ն տան» (ev-in «բո՞ն տունը»),
- 2) ev-i+n-in - «նրա տան» (ev-i (+n) «նրա տունը»):

Ստացական դերանուն-հատկացուցչի առկայությունը կանխում է հնարավոր խառնաշփոթը.

senin elinden – բո՞ն ձեռքից, օսոս elinden – նրա ձեռքից

Թուրքերենում մի շարք երկվանկ բառեր հոլովական կամ ստացականության մասնիկներ ստանաիս (բացառությամբ բացառական և ներգոյական հոլովների), կորցնում են երկրորդ նեղ ձայնավորը.

<i>Ուղղ.</i>	ilim (ilmî)	vakit (-ktî)
<i>Սեռ.</i>	ilm+in	vakt+in
<i>Տր.</i>	ilm+e	vakt+e
<i>Դայց.</i>	ilm+i	vakt+i
<i>Բաց.</i>	ilm+den	vakit+ten
<i>Ներգ.</i>	ilm+de	vakit+te

* Բանն այն է, որ այս երկու հնչյունները, որոնք թուրքերենում չեն արտաքերվում կամ վերարտարվում են որպես ձայնավոր հնչյուններ, աժանցման ժամանակ հանդեն են գայիս որպես բաղաձայն հնչյուններ:

⁸Տե՛ս Ա. Սաֆարյան, նշվ. աշխ., էջ 71:

* Տվյալ դեպքում ն հնչյունը ստանձնել է ներույթի դեր:

Հոգնակի հոլովումը

Թե՛ ժամանակակից հայերենի և թե՛ թուրքերենի հոլովման համակարգում հոգնակի թվի թերականական կարգն արտահայտվում է առանձին ձևութբներով, որոնք, իբրև կանոն, մենիմաստ են, այսինքն՝ բացի հոգնակի իմաստից, թերականական այլ իմաստ չեն արտահայտում:

Ժամանակակից հայերենի հոգնակերտ ձևույթներն են **-եր**, **-ներ**, **-ք**, **-իկ**, **-այք**: Գոյականի հոլովումը հոգնակի թվում գրեթե հասել է միօրինակության. բոլոր այն բառերը, որոնց հոգնակին կազմվում է **-եր** կամ **-ներ** ենթաձևութբներով, հոգնակիում հոլովվում են **ի** հոլովման վերջավորություններով:

Հատուկ խումբ են կազմում **-անք**, **-ենք**, **-ոնք**, **-ունք** ածանցներով կազմված հավաքական անեղականները՝ **բեռանք**, **կարենենք** և այլն:

Հոգնակի ուղղականը ուսումնասիրվող երկու լեզուներում էլ եզակից տարբերվում է միայն թվանիշ ձևույթների առկայությամբ:

Ժամանակակից թուրքերենի հոգնակերտ ձևույթներն են **-lar** և **-ler** վերջավորությունները: Թուրքերենին բնորոշ ծայնավորների ներդաշնակության կանոնի համաձայն, բարի վերջին վանկի ծայնավորից կախված՝ հոգնակերտ վերջավորության ծայնավորը կարող է փոփոխվել: Հոլովական թեքույթը դրվում է հոգնակերտ վերջավորությունից հետո: Ժամանակակից թուրքերենում հոգնակի հոլովման վերջավորությունների աղյուսակը հետևյալն է.

Բառի վերջին վանկի ծայնավ.		Թվանիշ ձևույթը		Հոլովանիշ ձևույթը
a, i, o, u	duvar yıldız peron kum	<u>lar</u>	<i>ուղղ.</i> <i>սեռ.</i> <i>սր.</i> <i>հայց.</i> <i>բաց.</i> <i>ներգ.</i>	+ Ø + in + a + i + dan + da
e, i, ö, ü	el deniz göl kostüm	<u>ler</u>	<i>ուղղ.</i> <i>սեռ.</i> <i>սր.</i> <i>հայց.</i> <i>բաց.</i> <i>ներգ.</i>	+ Ø + in + e + i + den + de

Թուրքերենի հոգնակի հոլովման ընդհանուր հարացույցը.

	-lar-	-ler-
<i>ուղղ.</i>	okul+ lar +Ø	defter+ ler +Ø
<i>սեռ.</i>	okul+ lar +in	defter+ ler +in
<i>սր.</i>	okul+ lar +a	defter+ ler +e
<i>հայց.</i>	okul+ lar +i	defter+ ler +i
<i>բաց.</i>	okul+ lar +dan	defter+ ler +den
<i>ներգ.</i>	okul+ lar +da	defter+ ler +de

Ի մի բերելով ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք տալ հայերենի և թուրքերենի հոլովական հարացույցի զուգադրական պատկերը.

Թուրքերենի հոլովական հարացույցը					
	Բարի վերջին վանկի ձայնավորը	a կամ i	o կամ u	e կամ i	ö կամ ü
Եզակի					+Ø
Արտաքին թերթուն	Ուղղ.	- (n)in	- (n)nun	- (n)in	- (n)nün
	Սեռ.	- (y)a		- (y)e	
	Դայց.	- (y)i	- (y)u	- (y)i	- (y)ü
	Բաց.	-dan/tan		-den/ten	
	Ներգ.	-da/ta		-de/te	
	Հոգմակի				
	Ուղղ.	-lar		-ler	
	Սեռ.	-ların		-lerin	
	Տր.	-lara		-lere	
	Դայց.	-ları		-leri	
	Բաց.	-lardan		-lerden	
	Ներգ.	-larda		-erde	

Հայերենի արտաքին թերման հոլովական հարացույցը*									
Հոլ.	1	2	3	4	5	6	7	8	9
Ուղղ.	Ø	Ø	Ø	Ø	Ø	Ø	Ø	Ø	Ø
Սեռ.	ի	ու	ա	ն	ան	յան	ոջ	վա	վան
Տր.	ի(ն)	ու(ն)	ա(ն)	ուն/ին	ան(ը)	յան(ը)	ոջ(ը)	վա(ն)	վան(ը)
Դայց.	Ø(ը)	Ø/ուն	Ø/ան	Ø(ը)/ ուն	Ø/ա(ն)	Ø(ը)	Ø/ոջ(ը)	Ø(ը)	Ø(ը)
Բաց.	ից	ուց	անից	ուց/ից	(ան)ից	ից	ոջից	(վան)ից	վանից
Գործ.	ով	ով	անով	ով	(ան)ով/ ամբ	ով	ոջով	ով	ով
Ներգ.	(ում)	(ում)	-	-	-	-	-	ում	-

Հայերենի ներքին թերման հոլովական հարացույցը				
Հոլ.	10	11	12	13
Ուղղ.	հայր	կայսր	բնություն	անուն
Սեռ.	հոր	կայսեր	բնության	անվան
Տր.	հոր(ը)	կայսեր(ը)	բնության(ը)	անվան(ը)
Դայց.	հայր(հորը)	կայսր(ին)	բնություն(ը)	անուն(ը)
Բաց.	հորից	կայսրից	բնությունից	անունից
Գործ.	հորով	կայսրով	բնությունով/ բնությամբ	անունով/ անվանբ
Ներգ.	-	-	-	-

* Ծնորհակալություն ենք հայտնում L. Հովսեփյանին իր «Արմանական լեզու – Էնցիքլոպեդիա. “Языки мира”» անտիպա աշխատությունից այս աղյուսակը մեզ տրամադրելու համար:

Որպես ամփոփում կարելի է ասել, որ թեև համեմատվող լեզուները պատկանում են տարբեր լեզվաընտանիքների (հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզու է, թուրքերենը՝ ալբայան), այնուամենայնիվ այս երկու լեզուները հոլովական հարացույցում կցականության տեսանկյունից ցուցաբերում են ավելի շատ նմանություններ, քան տարբերություններ:

Թուրքերենին բնորոշ է ձայնավորների առնմանության տեսակներից մեկը՝ ձայնավորների ներդաշնակությունը. բարի մեջ առկա ձայնավորների բնույթը պայմանավորվում է արմատի ձայնավորի տեսակով, որի պատճառով էլ առաջանում են հոլովանիշ մեկ ձևույթի տարբերակներ՝ ենթածնույթներ: Եթե հայերենում անունների հոլովումն իրականացվում է թե՝ նյութական ձևույթների կցման՝ մասնիկավորման և թե՝ հիմքի՝ ձևաբանական արժեք ունեցող հնչյունական հերթագայությունների միջոցով, ապա թուրքերենում այն իրագործվում է սուսկ մասնիկավորման միջոցով: Նշված երկու լեզուների համար բնորոշ է, որ հոլովակազմիչները բարին կցվում են վերջից:

Կցական լեզուներում, որպիսին թուրքերենն է, հոլովման հարացույցն ունի վառ արտահայտված առանցքային կառուցվածք. Եզակի թվի շարքի հոլովական բոլոր վերջավորությունները կցվում են ուղղական հոլովով, եզակի թվով դրված բառահիմքին, իսկ հոգնակի թվի շարքի բոլոր վերջավորությունները՝ ուղղական հոլովով, հոգնակի թվով դրված բառահիմքին: Սրանով ապահովվում է հոլովական հարացույցի կայունությունը՝ անփոփոխությունը, որը բնորոշ է կցական լեզուներին⁹:

АРМЕН МЕЛКОНЯН – Особенности агглютинации в системах склонений в армянском и турецком языках. – Статья посвящена сопоставительному анализу падежных систем в двух языках с точки зрения свойственной им обоим агглютинации. Хотя армянский и турецкий относятся к разным языковым семьям (индоевропейской и алтайской), у них наблюдается, при значительных различиях, много общего в технике склонения существительных. В армянском языке имеется два типа их склонения: с внешней флексией (присоединением падежных окончаний) и внутренней флексией (передованием гласных основы). Поскольку турецкий язык относится по своей структуре к чисто агглютинативным языкам, для него характерен исключительно аффиксальный способ образования падежных форм; отмечается также большая регулярность и единообразие падежных окончаний по сравнению с армянским.

ARMEN MELKONYAN – Peculiarities of Agglutination in the Declension Systems in Armenian and Turkish. – No typological-contrastive analysis of grammatical structures of Armenian and Turkish has been carried out so far. The article studies the comparative research of the declension system of the mentioned languages from the viewpoint of agglutination, which is peculiar to both of them. Though the languages

⁹ Տե՛ս Սերեբրեննիկով Բ. Ա., նշվ. աշխ., էջ 11:

under study belong to different language families (the first one is an Indo-European language, the second one – Altaic), they have many declension peculiarities, as well as some essential distinctions. There are two ways of formation of cases in Armenian. The first one is the method of affixation (external flexion); the second one is the way of vowel alternation (internal flexion). As the Turkish language is an exclusively agglutinative language, only the affixation method is specific to its structure. A due attention has been paid to the comparisons of declensional endings in the mentioned languages. At the same time there can be observed wide uniformity of case endings in Turkish as compared with Armenian.